Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**

Տիգրան Գաբրիելյան – նախարարի տեղակալ

Գայանե Հովսեփյան – ջրային ռեսուրսների կառավարման վարչության պետ

**2. Գործուղման վայրը ժամկետները**

Հարավաֆրիկյան Հանրապետություն, քաղաք Քեյփթաուն, 2023 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 6-ը:

**3. Հրավիրող կողմը**

Երկրի ուսումնասիրության կազմակերպության և հողերի չեզոք դեգրադացիայի նախաձեռնության (GEO-LDN) քարտուղարություն՝ GIZ-ի ֆինանսավորմամբ:

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցություն «Երկրի ուսումնասիրության կազմակերպության և հողերի չեզոք դեգրադացիայի նախաձեռնության» գլոբալ երկխոսության առաջին հանդիպմանը: Նախաձեռնությանը միանալու հայտ ներկայացրած 50 երկրներից հայտի հիմնավորումները հաշվի առնելով մասնակցության հնարավորություն են ստացել 13-ը՝ Քենյան, Սենեգալը, Նիգերիան, Գանան, Բելիզը, Բրազիլիան, Բոսնիան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Բենինը, Եթովպիան, Հայաստանի Հանրապետությունը, Կոլումբիան և Պերուն: Հայաստանի թիմում ընդգրկվել են ՇՄ նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը, ջրային ռեսուրսների կառավարման վարչության պետ Գայանե Հովսեփյանը, հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ, «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի համակարգող Նարինե Հակոբյանը և Կադաստրի կոմիտեի հողային ֆոնդի կառավարման GIS մասնագետ Լուսինե Եղիյանը:

GEO-LDN-ի գլոբալ երկխոսության նպատակն է միավորել երկրներին, որոնք կարևորում են հողօգտագործման պլանավորման և հողերի դեգրադացիայի չեզոքության հասնելու համար երկրագնդի դիտարկման տվյալները,

աշխարհատարածական տեխնոլոգիաները և միջոլորտային համագործակցությունը: GEO-LDN-ը որդեգրել է մի մոտեցում՝ օգնելու գործընկեր երկրներին սահմանել կարիքները տարածաշրջանային և ազգային մակարդակներում, առաջադրել համապատասխան լուծումներ, աջակցել գործընկեր երկրների համապատասխան դերակատարներին՝ օգտագործելով երկրագնդի ուսումնասիրության տվյալները՝ վերահսկելու հողերի դեգրադացիան և աշխատելու LDN-ի ուղղությամբ:

**5. Քննարկված թեմաները**

Բացման խոսքով հանդես եկան GEO-LDN-ի և UNCCD-ի քարտուղարության ներկայացուցիչները, ներկայացվեց միջոցառման ճանապարհային քարտեզը: FAO-ի կողմից ներկայացվեց FAO ILUP գործիքի նոր ուղեցույցները՝ մատնանշելով վերջիններիս կարևորությունը հողերի դեգրադացիայի չեզոքության համատեքստում:

Երկրները ներկայացնող թիմերին հանձնարարվեց պատրաստել և ներկայացնել պաստառներ՝ երկրում հողերի դեգրադացիայի չեզոքացման սահմանված թիրախների, դրանց հասնելու ճանապարհին երկրի դիտարկման տվյալների և աշխարհատարածական տեխնոլոգիաների կիրառման առկա վիճակի մասին: GEO-LDN-ի քարտուղարության և փորձագետների կողմից ամփոփվեց ընդհանուր խնդիրները և առաջարկները, մշակվեց UNCCD-ին ներկայացվող նախնական առաջարկներ՝ ուղղված երկրների հաշվետվողականության տվյալների արժանահավատության բարձրացմանը՝ երկրի դիտարկման տվյալների և աշխարհատարածական տեխնոլոգիաների կիրառմամբ:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Հայաստանի թիմի կողմից ներկայացվեց սահիկաշար(առդիր 1), որտեղ ամփոփված էր տեղեկատվություն երկրում հողերի դեգրադացիայի չեզոքացմանը հասնելու սահմանված թիրախների, հողային ֆոնդի կառավարման, կադաստրային տվյալների և հողային ծածկույթի տվյալների հավաքագրման, ինչպես նաև տվյալների հետ կապված առկա խոչնդոտների, կարիքների և մարտահրավերների, դրանց հաղթահարման ճանապարհների մասին:

**7.Հանդիպմների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Թիմերին հնարավորություն տրվեց մասնակցելու դասընթացների՝ ծանոթանալու WOCAT և GOOGL EARTH ENGINE հարթակներին:

- WOCAT-ը հանդիսանում է հողի կայուն կառավարման (SLM) գլոբալ ցանց, նպաստելով փաստաթղթավորմանը, գիտելիքների փոխանակմանը և կիրառմանը՝ աջակցելու

հարմարվողականությանը, նորարարությանը և որոշումների կայացմանը հողերի կայուն կառավարման համատեքստում:

- Google Earth Engine-ը միավորում է արբանյակային պատկերների և աշխարհատարածական տվյալների հավաքածուների բազմաբայթանոց կատալոգը՝ մոլորակային մասշտաբի վերլուծության հնարավորություններով: Earth Engine-ը փոփոխությունները հայտնաբերելու, միտումները քարտեզագրելու և Երկրի մակերեսի տարբերությունները քանակական ներկայացնելու հնարավորությամբ տվյալների բաց համակարգ է, որի կիրառումը մեծ օժանդակություն է որոշում կայացնողների և պլանավորողների համար:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Հայաստանի թիմի կողմից GEO-LDN-ի քարտուղարությանը առաջարկվեց դիտարկել Հայաստանի ցամաքային ծածկույթի թվային քարտեզի ստեղծման հարցում հնարավոր օժանդակության, ինչպես նաև նմանատիպ հանդիպումներում հաճախակի ներգրավվածության հնարավորությունը: Քարտուղարության ներկայացուցիչների հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ Հայաստանի թիմի առաջարկը կներկայացվի նոյեմբերի 13-17-ը Ուզբեկստանում կայանալիք ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի կիրարկման (CRIC 21) վերանայման կոմիտեի 21-րդ նիստին:

Գործուղվողներ՝ Տիգրան Գաբրիելյան

Գայանե Հովսեփյան